ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՎԵՑԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (15.01.2018 - 21.06.2018) ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վեցերորդ գումարման երրորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 8 հերթական, 7 արտահերթ և 4 հատուկ նիստ:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 37 հարց, որից 24-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին (1-ը անհետաձգելի), 13-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների (1-ը ՀՀ ԱԺ որոշման նախագիծ):

Հետագայում, հերթական նիստերի ընթացքում, նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 67 հարցով, իսկ արտահերթ նիստերի ընթացքում՝ ևս 24-ով, որից՝ 63-ը ՀՀ կառավարության նախաձեռնություն (27-ը անհետաձգելի), 7-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորական նախաձեռնություն, 1-ը համատեղ և 17-ը՝ պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող այլ հարցեր: Բացի սրանցից նստաշրջանի օրակարգը լրացվեց նաև 1 հարցապնդմանը պատասխանը քննարկելու հարցով և 2 ՀՀ ԱԺ հայտարարությունների նախագծերով:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 128 հարցերից (ներառյալ միջազգային պայմանագրերը) 106-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին, որոնցից գարնանային նստաշրջանի ընթացքում գումարված հերթական և արտահերթ նիստերի ընթացքում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել են 87-ը, որոնցից 74-ը՝ ՀՀ կառավարության, 12-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների, իսկ 1-ը համատեղ նախագծեր էին: Բացի օրենքների նախագծերից ընդունվեց նաև Ազգային Ժողովի 2 հայտարարությունը՝ առաջինը

վերաբերում էր ահաբեկչական խմբավորումների կողմից իրենց վերահսկողության ներքո գտնվող Իրաքի Հանրապետության տարածքներում եզդի ժողովրդի նկատմամբ 2014 թվականին իրականացված ցեղասպանության ճանաչմանը և դատապարտմանը, իսկ մյուսը՝ Սումգաիթյան ոճրագործության 30-րդ տարելիցին:

Նստաշրջանի ընթացքում ընդունված օրենքների ծանրակշիռ մասը պայմանավորված էին 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով: Այդպիսի օրենքներից առաջինը՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքների փաթեթն է, որի ընդունմամբ՝ նոր սահմանադրության համաձայն, սահմանվել է Կառավարության կազմը և կառուցվածքը, ամրագրվել են Կառավարության կազմավորման կարգի, ժամկետների, Կառավարության անդամների լիազորությունների ստանձնման, Կառավարության կազմում փոփոխությունները, Կառավարության հրաժարականը կարգավորող դրույթները, կարգավորվել են Կառավարության անդամների՝ վարչապետի, փոխվարչապետների, նախարարների իրավասությունները, նախատեսվել են դրույթներ Կառավարության նիստերի, Կառավարության որոշումների ընդունման կարգի վերաբերյալ, սահմանվել են Կառավարության անդամի պաշտոնի անհամատեղելիությանը և գործունեության երաշխիքներին վերաբերող դրույթներ, հարակից օրենքների նախագծերով էլ համապատասխան օրենքները համապատասխանեցվել են «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով սահմանված կարգավորումներին:

Երկրորդ օրենքը՝ «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքների փաթեթն է: Սույն օրենքով ստեղծվում է արտաքին պետական հաշվեքննություն իրականացնող անկախ, նոր պետական մարմին՝ Վերահսկիչ պալատի փոխարեն: Օրենքով ապահովվում է Հաշվեքննիչ պալատի գործունեության ամբողջ օրենսդրական բազան, այն իրավական հենք է հանդիսանում ՀՀ բարձրագույն աուդիտորական

մարմնի կողմից հանրային ֆինանսների կառավարման գործընթացում ժամանակակից պահանջների համապատասխան էական ու կառուցողական ներդրում ունենալու համար:

Միաժամանակ սույն օրենքի ընդունմամբ ՀՀ բարձրագույն աուդիտորական մարմնի գործունեությունը կարգավորող օրենսդրությունը համահունչ է դարձվում զարգացած երկրներում, մասնավորապես, ԵՄ-ում գործող հասկացություններին և չափանիշներին:

Երրորդը՝ «Սահմանադրական դատարանի մասին» Սահմանադրական օրենքների փաթեթն է: Վերջինիս ընդունմամբ ապահովվում է Սահմանադրական դատարանի՝ որպես սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմնի արդյունավետ գործունեությունը, հստակեցվում է Սահմանադրական դատարանի դատավորին ներկայացվող պահանջները, ստեղծվում են բավարար իրավական նախադրյալներ ժողովրդավարության ամրապնդման համար, իրավական համակարգում հնարավորինս կանխարգելվում և բացառվում են հակասահմանադրական իրավիճակները, անհրաժեշտության դեպքում իրավական գործիքներով ապահովվում է սահմանադրական մարմինների լիազորությունների թույլատրելի սահմանները և իշխանությունների տարանջատման սկզբունքի երաշխավորումը, բարելավվում են Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության գործող կառուցակարգերը:

Չորրորդը՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի փաթեթի ընդունումն է: Սույն օրենքով ամրագրվել են դատական իշխանության կազմակերպման, գործունեության հիմունքները և սկզբունքները, սահմանվել են Հայաստանի Հանրապետության դատարանների կառուցվածքը, կազմը և նրանց իրավասության տիրույթները՝ որպես Սահմանադրությամբ չնախատեսված մասնագիտացված դատարան ամրագրելով սնանկության դատարանը, կարգավորվել են դատարանների և դատական

իշխանության ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարցերը, ամրագրվել են դատավորի գործունեության երաշխիքները, նախատեսվել են դատավորի վարքագծի և էթիկայի կանոնները, նախատեսվել են դատական սանկցիաների տեսակները և դրանք կիրառելու հիմքերն ու կարգը, սահմանվել են դատավորի գործունեության գնահատման չափանիշները, կարգավորվել են Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման և գործունեության հետ կապված հարցերը, այդ թվում՝ սահմանվել են Սահմանադրությամբ չնախատեսված լիազորությունների շրջանակը, սահմանվել է որակավորման ստուգումների կազմակերպման և անցկացման կարգը, հավակնորդներին ներկայացվող պահանջներ, տարանջատվել են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորի լիազորությունները դադարեցնելու վարույթները, սահմանվել են դրանց շրջանակում դատավորի արդար դատաքննության իրավունքի իրացման բավարար երաշխիքներ, նախատեսվել է այլ քրեական գործի շրջանակներում դատավորի մասնակցությամբ առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ թույլտվություն տալու հարցի քննարկման և լուծման կարգը, ինչպես նաև իրացվել են այլ սահմանադրական մոտեցումներ:

Հինգերորդը՝ «Հանրային խորհրդի մասին» օրենքի ընդունումն է: Սույն օրենքով ամրագրվել են Հանրային խորհրդի գործունեության խնդիրները և գործառույթները, սահմանվել են Հանրային խորհրդի կառուցվածքը, կազմավորման և գործունեության կարգը, նախատեսվել են Հանրային խորհրդի անդամին ներկայացվող պահանջները, սահմանվել է, որ Հանրային խորհրդին կից գործում են 15 ոլորտային մշտական հանձնաժողովներ, կարգավորվել են Հանրային խորհրդի անդամի գործունեության դադարեցման և դադարման հիմքերի հետ կապված հարցերը, նախատեսվել են Հանրային խորհրդի գործունեության ապահովմանը վերաբերող դրույթներ:

Վեցերորդը՝ «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքն է: Վերջինս ամրագրում է Անվտանգության խորհրդի կարգավիճակը, գործառույթը և լիազորությունները, սահմանում է Անվտանգության խորհրդի կազմը, Անվտանգության խորհրդի գործունեության կարգի հետ կապված հարաբերությունները, բնականոն գործունեության ապահովմանը վերաբերող դրույթներ, ինչպես նաև նախատեսում է Անվտանգության խորհրդի որոշումների տեսակները եւ դրանց ընդունման կարգը:

Հաջորդ կարևորագույն օրենքը, որը պայմանավորված է 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով, դա «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքն է: Այս օրենքի ընդունումը անհրաժեշտություն է դառնում 2018թ. նորընտիր նախագահի պաշտոնը ստանձնելու պահից պետական կառավարման խորհրդարանական ձևի վերջնական հաստատմամբ և կառավարության դերի բարձրացման հետևանքով արտաքին քաղաքականության և միջազգային հարաբերությունների ոլորտում պետական գործառույթների վերաբաշխմամբ և դրանով պայմանավորված գործող ընթացակարգերի վերանայմամբ: Սույն օրենքով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կնքման, ուժի մեջ մտնելու, կատարման, փոփոխման գործողության կասեցման, դադարեցման, երկարաձգման և դրանց հետ կապված այլ հարաբերությունները:

2015 թվականի սահմանադրական փոփոխություններով պայմանավորված հիմնարար օրենքների ընդունումից բացի՝ Ազգային Ժողովը ընդունել է նաև այլ հատկանշական օրենքներ: Մասնավորապես՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքը, որով ամբողջ ծավալով ուժի մեջ է մտնում կուտակային կենսաթոշակի պարտադիր բաղադրիչը և որպեսզի այս անցումը ավելի սահուն լինի՝ պետությունը կենսաթոշակային համակարգի մասնակցի կուտակած եկամուտում ավելացնում է իր մասնաբաժինը՝ 5%-ից դարձնելով 7.5%, իսկ մասնակցի մասնաբաժինը համապատասխանաբար 5%-ից իջեցնում է՝ դարձնելով 2.5%:

Հատկանշական է նաև «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի ընդունումը, որով փորձ է արվում կանոնակարգել բարեգործության ոլորտը և մասնավորապես խոչընդոտել բարեգործությունը որպես ընտրակաշառք օգտագործելու հնարավորությունը:

ԱԺ-ն նաև քննարկեց և քվեարկությամբ մերժեց ԱԺ պատգամավորների 3 օրենսդրական նախաձեռնությունների Ազգային ժողովի նստաշրջանի օրակարգ ընդգրկելու հարցը: Երեք օրենսդրական նախաձեռնությունների հեղինակներն էլ «Ծառուկյան դաշինք» խմբակցության պատգամավորներն էին: Մերժվեց նաև «Ելք» խմբակցության հեղինակած 1 ԱԺ որոշման նախագծի նստաշրջանի օրակարգ ընդգրկելը: Որոշման նախագիծը վերաբերում էր Հայաստանի Հանրապետության 6-րդ գումարման ԱԺ ՀՀԿ խմբակցության պատգամավոր Արտաշես Գեղամյանի կողմից 2017թ. հոկտեմբերի 5-ին պատգամավորական էթիկայի կանոնները խախտելու վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություն ներկայացնելու համար ԱԺ էթիկայի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելուն:

Նստաշրջանի ընթացքում՝

- քննարկվեց և 62 կողմ, 39 դեմ, 0 ձեռնպահ ձայներով հավանություն տրվեց Կառավարության ծրագրին:

- քննարկվեց և 65 կողմ, 23 դեմ ձայներով հաստատվեց Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

- քննարկվեցին և գաղտնի քվեարկությամբ Բարձրագույն դատական խորհրդի անդամներ ընտրվեցին՝ առաջին պաշտոնում՝ Գագիկ Գարուշի Հարությունյանը՝ 96 կողմ, 2 դեմ ձայներով, երկրորդ պաշտոնում՝ Գևորգ Բալաբեկի Դանիելյանը՝ 90 կողմ 7 դեմ ձայներով, երրորդ պաշտոնում՝

Լիպարիտ Ռոբերտի Մելիքջանյանը՝ 82 կողմ, 15 դեմ ձայներով, չորրորդ պաշտոնում՝ Հայկ Արտաշեսի Հովհաննիսյանը՝ 86 կողմ, 11 դեմ ձայներով և հինգերորդ պաշտոնում՝ Սերգեյ Գուրգենի Մեղրյանը՝ 87 կողմ, 10 դեմ ձայներով:

- քննարկվեց և գաղտնի քվեարկությամբ՝ 64 կողմ 27 դեմ ձայներով ՀՀ սահմանադրական դատարանի անդամ ընտրվեց Հրայր Վարդանի Թովմասյանը:
- քննարկվեց և փակ, գաղտնի քվեարկությամբ՝ 51 կողմ, 3 դեմ ձայներով, մերժվեց Էմիլ Մարտիկի Բաբայանին Սահմանադրական դատարանի դատավոր ընտրելու հարցը:
- քննարկվեց և փակ, գաղտնի քվեարկությամբ՝ 36 կողմ, 17 դեմ ձայներով, մերժվեց Ելիզավետա Դանիելյանին Սահմանադրական դատարանի դատավոր ընտրելու հարցը:
- քննարկվեց և 63 կողմ, 30 դեմ ձայներով Ազգային Ժողովի պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրվեց Գևորգ Կոստանյանը:
- քննարկվեց և ի գիտություն ընդունվեց «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության մասին» հաղորդումը:
- քննարկվեց և ի գիտություն ընդունվեց Վերահսկիչ պալատի 2017 թվականի տարեկան հաշվետվությունը:
- քննարկվեց և ի գիտություն ընդունվեց Կենտրոնական Բանկի տարեկան գործունեության վերաբերյալ հաղորդումը:
- քննարկվեց և ի գիտություն ընդունվեց «2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը:

- քննարկվեց և ի գիտություն ընդունվեց «Հայաստանի Հանրապետության դատախազության 2017 թվականի գործունեության մասին» հաղորդումը:
- ԱԺ-ն լսեց «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2017 թվականի գործունեության մասին» հաղորդումը:
- քննարկվեց և գաղտնի քվեարկությամբ՝ 81 կողմ, 3 դեմ ձայներով ընդունվեց «ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Մանվել Սեկտորի Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու միջնորդագրի մասին» որոշումը, ապա 77 կողմ, 3 դեմ ընդունվեց «ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Մանվել Սեկտորի Գրիգորյանին ազատությունից զրկելուն համաձայնություն տալու միջնորդագրի մասին» որոշումը.

Բացի հերթական և արտահերթ նիստերից նստաշրջանի ընթացքում տեղի ունեցան նաև 4 հատուկ նիստեր, որոնցից մեկը՝ արտագնա: Նախ, ապրիլի 9-ին Կարեն Դեմերճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի ունեցավ Նախագահ Արմեն Սարգսյանի պաշտոնի ստանձնմանը նվիրված հատուկ արտագնա նիստ, ապա, ապրիլի 17-ին տեղի ունեցած հատուկ նիստում Ազգային Ժողովը 77 կողմ, 17 դեմ ձայներով Վարչապետ ընտրեց «ՀՀԿ» և «ՀՅԴ» խմբակցությունների կողմից առաջադրված Սերժ Սարգսյանին: Ապրիլի 23-ի Սերժ Սարգսյանի հրաժարականից հետո՝ մայիսի 1-ին «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 140-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավունքի ուժով գումարվեց հատուկ նիստ՝ քննարկելու ՀՀ վարչապետի ընտրության հարցը: «Ելք» խմակցության կողմից Վարչապետի թեկնածու առաջադրվեց Նիկոլ Փաշինյանը: Ազգային Ժողովը 45 կողմ, 56 դեմ ձայներով մերժեց Նիկոլ Փաշինյանին Հանրապետության վարչապետ ընտրելու հարցը: Մայիսի 8-ին «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրա–կան օրենքի 140-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավունքի ուժով գումարվեց ևս մեկ հատուկ նիստ: Այս անգամ ՀՀ սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ

մասով և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 140-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված կարգով՝ ՀՀ ԱԺ պատգամավորների առնվազն 1/3-ը կրկին վարչապետի թեկնածու առաջադրեց Նիկոլ Փաշինյանին: Ազգային Ժողովը 59 կողմ, 42 դեմ ձայներով Վարչապետ ընտրեց Նիկոլ Փաշինյանին:

Նստաշրջանի ընթացքում ԱԺ պատգամավորները ՀՀ կառավարությանը դիմել են 82 բանավոր հարցով: Հնչել է 101 պատգամավորական հայտարարություն, որոնցից 48-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը:

Նստաշրջանի ընթացքում ընդունվեց 9 միջազգային պայմանագիր վավերացնելու մասին օրենքի նախագիծ: Այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության և ԵՎրոպականՄիության միջև հարաբերությունների զարգացման համար հիմնարար նշանակություն ունեցող «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, ԵՎրոպականՄիության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագիրը վավերացնելու մասին» միջազգային պայմանագիրը վավերացնելու մասին օրենքը: Կարևոր էր նաև տարածաշրջանում ենթակառուցվածքների զարգացմանը միտված «ՏՐԱՍԵԿԱ մուլտիմոդալ փոխադրումների զարգացման մասին համաձայնագիրը (կից առարկությամբ) վավերացնելու մասին» օրենքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիան վավերացնելու մասին» օրենքը: Դե իսկ ԵՎրասիականտնտեսական միության հետ ինտեգրացիան խորացնելու առումով կարևոր էր «ԵՎրասիականտնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաները ԵՎրասիականտնտեսական հանձնաժողովի հետ կամավոր համաձայնեցնելու և ԵՎրասիականտնտեսական

միության անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաների տրամադրման հետ կապված՝ ԵՎրասիականտնտեսական հանձնաժողովի կողմից քննություն անցկացնելու կարգի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքը:

Գարնանային նստաշրջանից հետո՝ հուլիսի 11-ին, կառավարության նախաձեռնությամբ հրավիրվեց Ազգային Ժողովի արտահերթ նստաշրջան: Վերջինիս օրակարգում ընդգրկված բոլոր 7 հարցերն էլ կառավարության օրենսդրական նախաձեռնություններն էին և ընդունվեցին Ազգային Ժողովի կողմից: Այս հարցերից առավել հատկանշական էին «Մի շարք վարչական իրավախախտումների համար կիրառված տուգանքների համաներման մասին» ՀՀ օրենքը, որի ընդունմամբ մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտում կատարած անձինք ազատվեցին վարչական ակտով նախատեսված տուգանքի գումարը (չվճարած մասը), ինչպես նաև կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելու պարտականությունից:

Հիշարժան էր նաև «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին» արձանագրության վավերացումը, որով առաջարկվել է Պայմանագրի 10-րդ կետում կատարել փոփոխություն, որը կնախատեսի Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդում կառավարության ղեկավարի մակարդակով ներկայացված լինելու հնարավորություն, եթե համապատասխան պետության օրենսդրությամբ նա օժտված է բարձրագույն խորհրդի իրավասության մեջ մտնող հարցերով որոշումներ ընդունելու լիազորություններով՝ հաշվի առնելով 2015թ. Սահմանադրությամբ ՀՀ անցումը խորհրդարանական համակարգի և դրանով իսկ ՀՀ Նախագահի լիազորությունների սահմանափակումը և ՀՀ վարչապետի լրազորությունների ընդլայնումը: